НЕКРОЛОГ

ՅՈԼԱԿ ԵՓՐԵՄԻ ԱՂԱՋԱՆՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Ա.Լ.Մնջոյանի անվան Նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտը (ՆՕՔԻ) ծանր և անդառնալի կորուստ կրեց: Կյանքի 68-րդ տարում հանկարծամահ եղավ ՆՕՔԻ-ի լաբորատորիայի վարիչ, քիմիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Ռուսաստանի բնական գիտությունների ակադեմիայի հայկական մասնաճյուղի քիմիական բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար Յոլակ Եփրեմի Աղաջանյանը:

Յ. Ե. Աղաջանյանը ծնվել է 1933 թ. Բաթումի քաղաքում: 1955 թ. ավարտել է ԵՊՀ-ի քիմիական ֆակուլտետը: 1958-61 թթ. սովորել է ՍՍՀՄ ԳԱ Օրգանական քիմիայի ինստիտուտի ասպիրանտուրայում, որտեղ և պաշտպանել է իր թեկնածուական թեզը: Մինչև 1967 թ. աշխատել է Մոսկվայի Բնական միացությունների, ապա Սպիտակուցների սինթեզի գիտահետազոտական ինստիտուտներում:

1967 թ. մինչ կյանքի վերջին օրը աշխատել է ՆՕՔԻ-ում՝ գլխավորելով նրա հիմնական լաբորատորիաներից մեկը: 114 գիտական աշխատությունների և 28 հայտնագործությունների հեղինակ էր, նրա գիտահետազոտական աշխատանքի հիմնական ոլորտը ընդգրկում էր ամինաթթուների, պեպտիդների, պոլիպեպտիդների, ադամանտանների և այլ հետերոպոլիէդրիկ միացությունների սինթեզն ու կենսաբանական հետազոտությունները, որի արդյունքում ստացվել են մի շարք նոր հակաուռուցքային, հակաբորբոքիչ, հակաշաքարախտային միացություններ:

Յոլակ Աղաջանյանի կորուստով ՆՕՔԻ-ն կորցրեց անբիծ կենսագրություն ունեցող, ծայրահեղ ազնիվ գործընկերոջ և տաղանդավոր գիտնականի: